

մեծութիւն մը, ինչ ազնուականութիւն մը, ինչ արիութիւն մը, ինչ զօրութիւն մը կայ որ մըրկին մէջ չերևայ . կազնին լեռներուն գագաթանց վրայ և հակառակաշունչ հովերուն յարձակմանց մէջ միշտ աւելի կ'ուժովնայ :

Դաւասիկ մտաւոր և բարոյական մարդուն ծշմարիտ յառաջադիմութիւնը , և մարդկութեան կատարեալ ըլլալու ծշմարիտ անսահման յարմարութիւնը , որ կրօնքը ամենուն կը յայտնէ : Դարձր ուրիշ մտածութիւնները , բոլոր ուրիշ լեզուները խաթէութիւն է :

Այսուհետ ամենուն էլ յայտնէ ըսի . և յի-

րաւի , քրիստոնէութեան մէջ , թէ աղքատ թէ հարուստ , թագաւոր ըլլայ թէ գեղացի , ամէնքն ալ կրնան , ամենուն ալ պէտք է իւրաքանչիւր ըստ իւրում շափու աստուածային շնորհաց և ըստ զօրութեան իր բնական կարողութեանց որ դիմէ ու համար իմաստութեան , առաքինութեան և նոյն իսկ սրբութեան որ անոնց պատկն է : Դսիկայ է ամենայն Դսետարանի աշակերտներուն գեղեցիկ կոչումը . ինչ վիճակէ որ ըլլան և ինչ խեղճ բաղդէ , կրնան և պարտական են մինչև հան բարձրանալ :

### ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

#### ԳՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ

ԺԱ.

#### Տաղ Յոշաննու Կարաղետին :

Ի յանապատէ լերանց ձայն աւետաւոր հընչեաց .  
Կուսածին որդւոյն քարող կարապետ բանին յայտնեալ :  
Ես ձայն բարբառոյ ասէ անուն անեղին եղեալ .  
Աս մարդարէից ըղձումն , սա առաքելց պարծանք :  
Աս 'ի փորձութեանց հովմոց տունկ մի յանտառից շարժեալ .  
Աս ետ զաւետիս առ հարսն զնոյն գարձեալ և մեզ յայտնեաց :  
Աս մեծ 'ի կանանց ծընունդս , երկրորդ հեղիսաս գողով :  
Աս 'ի հերովդէէ խոռվեալ եղեալ 'ի պահեստ բանտին :  
Եւ հերովդիհա խոռվէր ընդ յանդիմանիչ բանին .  
Ո՞ի լիցի օրէնս ասէ , անօրէն խաթող պատրող ,  
Կողածին եղբայրըն քո հողանիւթ՝ զուգեալ ընդ քեզ :  
Խյումք առ խումք հրաւէր տրւեալ բազմութեան զօրաց իւրոց .  
Գյունդ առ գունդ ժողովեցան այգուն միաբան 'ի ձան .  
Գյուստը հերովդիայ եկեալ դէմն առեալ մոլէր աղջիկն .  
Ի խընձոյս իջեալ աղջիկն առաջի թագաւորին :  
Հերքըն ծալ 'ի ծալ առեալ նրմանեալ արքայօձին .  
Ծօքըն ծաւալ ծըփէր ծիրանի ծովու նրման :  
Ուլունքն 'ի վերայ լանջացն նրմանեալ լերանց ծաղկանց .  
Եւ վարդ վառելով այտիցն , նրմանեալ խայծեալ նրուանց :  
Ոտնաձայն թընդիւն տաղիցն նոյն և 'ի շարժիլ մատանցն .  
Աս դարձիդարձեալ մոլէր առաջի թագաւորին .  
Շեմս առեալ ձեսկեալ ձեմէր , վազըս կաքաւիք վազէր :  
Ինդ այն հերովդէս մոլէալ ընդ անձն ապաստան լինէր :  
Վասն էր կատաղիս մոլիս դուստը հերովդիադայ :

Աշնդրեաւ դու յինէն պարգևս զգերագոյն փառաց իմոց :  
 Դաշինըս եղեալ ուխտէր զփառս իմ քեզ՝ի կեանս իմ տամ,  
 Ե մօրէն խրատեալ աղջիկն զգլուխն Յովհաննու իշնդրէր :  
 Դու տուր ինձ այսօր պարգևս զգըլուխն Յովհաննու հատմամք ,  
 Օ այն կարապետին մեծի , զայն ձեւնադրոջի Փըրկին :  
 Տըրտմեալ հերովդէս ընդ բանսն ոչ կարաց սըտել ուխտին .  
 Փութով առաքեաց 'ի բանտն , տայր զշար խորհըրդոյն պարգևս .  
 Եղեալ 'ի վերայ սկրտեղ բերեալ և մատոյց նըւէրս .  
 Ողբայ և երկիրս այսօր , զլոյն յանապատէ շիջեալ ,  
 Ո մէջ 'ի դըժոխս քարոզ աւետարանէր զգալուստ ,  
 Ո 'ի անյոյս նընթէք մեռեալք , տէր յաղթեաց մահու խաջիւն ,  
 Եւ մեզ յարութիւն շնորհեաց զիւր զողորմութեան շնորհմն :  
 Վեզ փառք վայելէ Փըրկիւ , այժմ և յաւիտեանս ամէն :

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Դարապուններու վրայ աւոչէութիւն :

Ժ. ԱՊԱՆՏԱ : — Մաւրիտանացւոց թագաւորներուն Վորտովա ունեցած գրատունը շատ երեւլի էր և արեւելեան ձեռագրաց գեղեցիկ հաւաքում մը ունէր , բայց սպանիացւոցմէ աւարեցաւ , երբոր Ֆերտինանտոսի և Խապէլլայի թագաւորութեան ատեն Վորտովան առնուեցաւ : Մայս աշխարհէին առաջին գրատունը Եստուրիալինն է , զոր Լարուս և կանգնեց և Փիլիպպոս Բ շատ ձոխացուց : Մինկայ Ա . Լ աւրենտիոսի վանքին մէջն էր , և 130,000 հատորէն աւելի ունէր և իբր 5,000 ալ ձեռագիր , որոնցմէ 3000ը արաբերէն էին , մնացածներն ալ երբայեցի , յոյն և լատին էին . 1671էն կայծակէն շատ վնասուեցաւ : — Ա ատրիտի մէջ իրեք հասարակաց գրատուն կայ : Թագաւորական գրատունին ալ Փիլիպպոս և կանգնեց 1712էն : Հասարակաց են նաև Ս . Իոնտրոսի և Ս . Ֆէւնանդէսի գրատունները : — Մէքալա , Վալամանքա և ուրիշքաղաքներ ալ հասարակաց գրատուններ ունին : — Ապանիոյ մասնաւորաց գրատուններուն մէջ երեւլի եղած են Վը-

րիստափոր Վոլոմակոսի եղբօրը Ֆերտինանտոս Վոլոմակոսի գրատունը , Վըսիմենէս ծիրանաւորին գրատունը , զոր Լէքալայի համալսարանին թողուց կըտակաւ , և այն :

Ժ. ՓՈՐԹՈՒԳԱՆ : — Լայս տէրութեանս մէջ հասարակաց գրատունները սակաւաթիւ են . 'ի վերայ այսր ամենայնի Լիսպոնայի Առաջառական գրատունը , զոր Հնգետասաններորդ դարուն մէջ Լէֆոնսոս Ե շինեց , շատ ընտիր գրքեր ունի . նոյնպէս Ա . Վինչենտիոս պէ Ֆորսուած գրատունն ալբորը Ծորթուգեցի լեզուով եղած գրքերուն ամբողջ հաւաքում մը ունի : Շ ատ ձօխ էին երեմն նաև Ինենեղիկնեանց , Լութավանից , և այլն , գրատուններն ալ : — Երեւելի է նաև Վոյիմակրայի համալսարանի գրատունն ալ :

Ժ. ՊԱՆԴԱ : — Բէկպէտ Պաղղից մէջ Կերմանիայէն աւելի քիչ գրատուն կայ , 'ի վերայ այսր ամենայնի 200 քաղաքէն աւելի կայ որ ձօխ գրատուններ ունին : Փարիզէն դուրս՝ Վ կի , Պըզանառնի , Վարսիլիոյ , Առուանի , Վթրասպուրկի , Ջուլյանի , Ջորուայի գրատուններէն իւրաքանչիւրը 50,000 հատորէն աւելի ունին , իսկ Պորտոյի և Լիոնի գրատուններն ալ 100,000 հատորէն աւելի : Պաղղիոյ գաւառական բոլոր գրատուններուն մէջ 3 միլիոն հատորէն աւելի գիրք կայ : Փարիզու մէջ 39 գրատուն կայ , և զլիսա-